

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՎՆՅԱՆ

Բանասիրական զիտությունների դոկումուտ, պրոֆեսոր

ՖՐԵԴԵՐԻԿ ՖԵՅԴԻՆ «ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍՏԱԳԻՐՁԸ» ՈՐՊԵՍ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԳՐԻ ՀԱՐԱՏԵՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԱՏՅԱՆ

Ֆրեդերիկ Ֆեյդին 20-րդ դարի ֆրանսիացի ճշանավոր հայագետ է, որը թողել է հարուստ զիտական ժառանգություն: Նա երկար տարիներ զբաղվել է հայագիտությամբ, եղել է Սորբոնի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչը, բազմից այցելել է Խորհրդային Հայաստան¹:

Լայն էին Ֆ. Ֆեյդիի զիտարետագոտական հետաքրքրությունները հայագիտության բնագավառում՝ հայ պատմչներ, «Սասունցի Դավիթ» էպոս, հայոց լեզվի պատմություն, հայկական բարբառներ, Հայ Եկեղեցու պատմություն, հմայիլների բնագրեր և նրանց մեկնարկություններ, ուկեղարյան հայ գրականության և գրի խմբիներ, ժամանակակից հայ գրողներ և այլն:

Ֆրեդերիկ Ֆեյդին հմտացել է թե՛ գրաբարի, թե՛ հայերենի բարբառների և թե՛ ժամանակակից արևմտահայ լեզվի մեջ:

Նրա պատրաստած հայոց լեզվի հասագիրը, որը երկու անգամ է հրատարակվել, գրված է արևմտահայերենի ուսուցման համար. «Manuel de langue arménienne (Arménien occidental moderne)», Paris, 1969²:

Դասագիրքը ծավալում է. ում 394 էջ: Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին զյուսառերով, շրջանակի մեջ ընդգծված ձևով տպագրված է հետևյալ ընծայականը. «Այս համեստ գործին երկրորդ տպագրութիւնը կը ծօնեմ Երևանի 2750 ամեակին»:

Դասագրքի սկզբում կա համառու գեկուց, որը ներկայացնում է դասագրքի ստեղծման երկարատև պատմությունը: Այդ գրքում եղած բոլոր դասերը մեթոդապես անցել են գործնական կիրառման ստուգման ընթացքով, այդ իսկ պատճառով նրանք երաշխավորում են հայոց լեզվի հաջող ուսուցումը: Ցուրաքանչյուր դասին կցված վերլուծական հանձնարարականները, սկսած առաջին դասից մինչև վերջինը, հարավորություն են ընձեռում արագորեն հասնել ուսուցման ցանկալի արդյունքին: Գրքի առաջարան-գենկուցում և ողջ դասագրքում ֆրանսերենի ու հայերենի համադրությամբ մշակված է ուսուցման մի մեթոդ, որն, անշուշտ, զիտական առումով եզակի է իր տեսակի մեջ և պետք է հետաքրքրի հայոց լեզվի մեթոդիկայով գրադարձ մասնագետներին:

¹ Տողերիս հեղինակը լսել է. Ֆ. Ֆեյդիի հայերևնով կարդացած գլուխումը և Արովյանի անվան հայկական պետքական մասնավարժական ինսիրբությունը պրոֆեսորադասասխուստների կազմի և ուսանողության համար:

² Մաշփորի անվան Մաքենատարանի գրադարանում պահպան գրի այս օրինակն ունի Ֆ. Ֆեյդիի հսկույալ ընձայագիրը. «Հայաստանի իտառադր. «Մաքենատարանին», յարգանօր Ֆեյդի, Փարիզ, 22 սեպտ. 1969»:

Դասագրքի «Նախարանը» բնորոշում է հայոց լեզվի հնդեվրոպական լեզվալնտաճիքում ունեցած առանձնահատկությունները: Սշխարհագրական դիրքով հայոց լեզուն սերտ շփումների մեջ է եղել իրանական և հեղենական երկրների մետք: Արդի հայերենը ձևափոխվել է երկու հարուստ լեզուների՝ արևելահայերենի և արևմտահայերենի, որոնք մեծ մասմաս ունեն նույն քերականական կառուցվածքը: Իրենց զարգացման մակարդակով հայերենի երկու ճյուղերը մերկապացնում են լեզվական մեծ հարստություն:

«Նախարանում» սեղմ անդրադարձ կա հիմնգերորդ դարի հայոց լեզվին: Ֆեղին շեշտում է, որ հայերենը հիմ մշակված լեզուներից է: Գրերի զյուտից մետք աստվածաբանությունը և դավանարանական վեճերը թարգմանչմերի գրչի տակ զարգացրել են այդ լեզուն: Հետո հայերենի վրա իրենց կմիջն են դրել խաչակրաց արշավանքները և փոխհարաբերությունները Համատի երկրների մետք: Հայոց լեզվի վրա ազդել են նաև գաղթօջախների առկայությունը Եվրոպայում: Արդեն 1512 թվականին հայերը տպարան են հիմնել Վենետիկում: Հայերենը նոր զարգացում է ստացել 18-րդ դարում, երբ Վենետիկում Միթթարյանները հիմնեցին իրենց միաբանությունը: Իսկ 19-րդ դարում հայոց լեզուն լայն գործածության մեջ դրվեց ամենատարեր բնագավառներում գրականություն, արվեստ, գիտություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն և այլն՝ բոլոր ճյուղերի գծով ստեղծելով մտային հարուստ բառարան: «Այս տասնմերժ դարերի ընթացքի հայոց լեզվի կազմակորման արդյունքն այն է, որ արդի հայերենը քաղաքակիրթ մի լեզու է, կատարելապես բացադիր որակի»³:

Ֆ. Ֆեղիի «Հայոց լեզվի» դասագրքի ամենամեծ արժանիքն այն է, որ հետինակը լեզվական ուսուցման գործընթացն իրականացնում է հայ ժողովրդի պատմության փաստերին ծանոթացնելուն զուգընթաց, և այդ միաբարության արդյունքը կարևորվում է նրանվ, որ օտարազգին յուրացնելով հայերենը՝ լիովին պատկերացում է կազմում հայ ժողովրդի պատմական անցյալի մասին, իմանում է, թե ինչպիսին է եղել հայ ժողովրդի ծագումը, զարգացումը, 20-րդ դարում նրա ունեցած դերը: Ֆ. Ֆեղին նմանօրինակ նյութերը քաղում է հայ պատմիներից, հայ բանակերներից ու պատմաբաններից: Դասերի որոշ հատվածներում ներկայացվում են նաև հայ ժողովրդի տարրեր խավերի կենցաղը, սովորությունները, ազգային բնակվորության լավագույն գծերը: Օրինակ, «Ծանապարհորդը» («Le voyageur») թեմայի բնագործությունը է, որ հայկական զյուղերում հյուրընկալալությունը սրբազն պարտականություն է, քաղաքաբնակ հայերը ևս շատ հյուրընկալ են⁴:

Ֆ. Ֆեղին «Հայոց ծագումը» բաժնում նշում է հայերենի հնդեվրոպական լեզու լինելը և Հայոց աշխարհի մասին հիշատակումը համարում է Ք. ծ. ա. 715-ին Ասորեստանի Սարգոս թագավորի արձանագրությունը, որում պատմվում է Արարատյան ազգերի դեմ նրա վարած պատերազմների մասին, սակայն վերջինում չի հիշվում Արմենիա անունը: Արմենիա անունը, սակայն, հիշատակում է Պարսից Դարերի արքան, ում հրամանով Ք. ծ. ա. 515-ին Բենիսթումի ժայռի վրա փորագրվել է համապատասխան արձանագրությունը: Ֆ. Ֆեղին ներակացնում է, որ Ք. ծ. ա. 715-ից 515 թվականների միջն ընկած ժամանակահատվածում հայերն ապրում էին Արարատյան երկրում:

³ F. Feydit, Manuel de langue arménienne; Paris, 1969, p. XIV.

⁴ Նույն գլուխում, լ. 100:

Մի առանձին դաս պվիրված է Վուամշապուհ թագավորին, Սահմակ Պարթևին և Մես-լուպ Մաշտոցին: Դասի համապատասխան հատվածը խորագրված է: «Վուամշապուհ թագաւոր, Ս. Սահմակ և Ս. Մեսլուպ»⁵: Այսօրինակ խորագրով հայագետը շեշտել է մի կարևոր իրողություն՝ Սահմակ Պարթևը և Մեսլուպ Մաշտոցը հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու սրբերից են: Նա նաև հայերենը նոր յուրացնողի համար մատչելի ձևով հիմնավորում է, որ Վուամշապուհ արքան, Սահմակ Պարթևը, Մեսլուպ Մաշտոցը գրերի զյուտին մտնեցել են որպես քաղաքական ու պետական բացառիկ իրադարձություն, որի արդյունքը դարձավ Հայաստանում ծավալված լուսավորական հզոր շարժումը, ողջ Երկրով մեկ դպրոցներ քացելը, Աստվածաշնչի թարգմանությունը: «Աստվածաշնչը այնքան սրանելապես յօպարզմանեցին, որ հայերեն թարգմանությունը կսեպվի «թագուիի ամեն թարգմանութեամց»: Հորիմեցին նաև ինքնատիպ գործեր, մանավանդ Վարդապետական և կրոնական ճառեր, և մեկնություններ և պատմական գրքեր, բոլորն ալ մաքուր ու գեղեցիկ լեզվով: Վուամշապուհի թագավորությունը սկիզբն է հայ մատենագրության այն շրջանին, որ կկոչվի «Ռակետար»⁶:

1939-ին, Փարիզում, «Անահիտի» երկրորդ համարում լուս է տեսել դեռևս երիտասարդ հայագետ Ֆրեդերիկ Ֆեթովի «Հեթում պատմիշ, հետիմակ «Շաղիկ պատմութեանց արևել-եան աշխարհի»» գրքին Վերաբերող ուսումնասիրությունը՝ Արշակ Չոպանյանի առաջա-բանով: Ֆեթովին հմտորեն բացատրում է, թե որն է Հեթում պատմիշի երկի արժեքը և ինչու այն Եվրոպայում թարգմանվել է տարբեր լեզուներով ու արժանացել միշագային ճամաչ-ւման: Հայտնի է, որ Հեթումն իր երկու ֆրանսերեն թեկադրել է Նիկոլա Ֆալկոն անունով մի վանականի՝ 1307-ին, որը հետագայում Հեթումի թեկադրած ֆրանսերենից վերածել է լա-տիներենի՝ այն ժամանակների նկրոպական երկրների գրոց լեզվին: Հետագայում Հեթու-մի երկը թարգմանվել է նաև իտալերեն ու անգլերեն:

Ֆեթովի մեջբերում է Հեթում պատմիշի երկի հին ֆրանսերենով գրված բնագրից մի հատված, այնուհետև նմում նույն հատվածի հայերեն թարգմանությունը: Խոսելով հայկա-կան այրութենի մասին՝ Հեթում պատմիշն ասում է: «Զանազան տեսակ գիր ումին, մէկ քա-մի արմենեան Կ'ըսուին, միասները արիական (կամ ալոյէն)»⁷: («Les ont diverses lettres et les une sont dites arménoises, les autres arien (aloyen)»):

1964 թվականին Ֆրեդերիկ Ֆեթովում Փարիզում հրատարակում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի ֆրանսերեն թարգմանությունը՝ համապատասխան նախա-բանով: Նա նշում է, որ հայերը երրորդ դարի վերջին արդեն ներումել են քրիստոնեութ-յունը, սակայն քրիստոնեության տարածմանը խոչընդոտում էր Սուրբ Գրքի հայերեն լեզ-վով չհիմնելը, որի պատճառը ազգային այրութենի բացակայությունն էր: «Այդ աննպատ վի-ճակից դուրս գալու հոգսն իր վրա է վերցնում Սուրբ Մեսլուպը»⁸:

Հատ Ֆեթովի՝ մեսրոպյան այրութենի հայտնագրումը հզոր խթան էր հայ ժողովրդի

⁵ Նոյն գլուխում, լ. 137:

⁶ Նոյն գլուխում, լ. 285:

⁷ Ֆ. Ֆեթովի. Ներում պատմիշ, Փարիզ, 1939, լ. 14:

⁸ David de Sassoun, Épopée en vers, traduit de l'arménien avec une introduction et des notes de Frédéric Feydit, Gallimard, 1964, p. 37.

մտավոր կյանքի համար. դրա շնորհիվ հայերը ստեղծեցին արժեքավոր մատենագրություն, որով հավասարի իրավունքով կանգնեցին հովերի, լատինացիների և ասորիների կողքին («Les Arméniens sont côté à côté avec les Grecs, les Latins et les Syriens»)⁹:

Ֆ. Ֆեղին ցավով նշում է առա, որ Կոստանդնուպոլիսի գրավումը թուրքերի կողմից դարձավ Հայաստան Արևմտարից մեկուսացնելու վերջին հարվածը («La prise de Constantinople par les Turcs achève d'isoler les Arméniens de l'Occident»)¹⁰:

«Հայոց լեզվի» դասագրքում ֆրանսիացի հայագետը դրվագված ներկայացնում է հայ ժողովրդի անցած ողջ պատմությունը՝ Հայկ Նահապետից մինչև մեր օրերը: «Հայկ և Բեղ» առասպելը նա ներկայացնում է որպես ավանդական գրուց, ըստ Ստեփանոս Պալատանյանի և ոչ ըստ Մովսես Խորենացու վերապատմելով այս: Ստեփանոս Պալատանյանի «Պատմություն Հայոց» աշխատասիրությունից Ֆեղին զյուտի պատմության որոշ հատվածներ կրկնում է նոյնությամբ, իսկ որոշ մասեր կրճատում է և բովանդակությունը խիստ համառոտած կրկնում: Բերենք երկու օրինակ:

Ստ. Պալատանյան

Այստեղ՝ Սենաար կոչված դաշտավայրում մարդիկ մտածեցին մի բարձր աշտարակ շինել, որի մեջ կարողանային պատսպարվել, եթե մյուս անգամ ջրիներ լիներ: Այս ամբարտավան խորհուրդը լեզուների խառնակության պատճառով գլուխ չեկավ. աշտարակը կիսակատար մնաց...¹¹:

Ֆ. Ֆեղի

Նոյն սերունդը Սենաար կոչված դաշտավայրի մեջ փորձեց բարձր աշտարակ մը շինել նոր ջրիներելու մը պաշտպանվելու համար, բայց լեզուների խառնակության պատճառավ, աշտարակը կիսակատար մնաց...¹²:

Ստ. Պալատանյան

Երկու կողմը միմյանց պատահեցան մի դաշտում, որ շոշապատված էր բարձր լեռներով, և կատաղաբար հարձակեցան միմյանց վրա, բայց երկու կողմն էլ անպարտելի մնացին: Այս անակնկալ դիպվածից զարմուրած՝ Բեղ մտածեց թետ քաշվիլ, մինչև որ յուր բոլոր բազմությունը հասմի և նորից պատերազմ սկսի: Այս միջոցին Հայկ, որ միայն յուր ցեղի ազատությունն ուներ աշքի առաջ, մոտեցավ բարելոնյան հսկային և յուր մետք հասցըրեց օրա զրահապատ կուրծքին. բռնավորն ընկավ ամենդան, և նորա զորքը ցիր ու ցանելավ:

...Ահա այս կերպով սկիզբ առավ այն ազգությունը, որ յուր տոհմապետի անունով կոչվեցավ Հայ, իսկ երկիրը՝ Հայաստան կամ Հայոց աշխարհ¹³:

Ֆ. Ֆեղի

Կատաղաբար կովեցան հսկաները. ահագին դդրությունը և դյուցազներու կոտորածով կոիկը անորոշ մնաց, մինչև որ Հայկ, իր նիզակը բարելոնյան հսկային զրահապատ կուրծ-

⁹ Նոյն տեղում:

¹⁰ Նոյն տեղում, լ. 38:

¹¹ Ստ. Պալատանյան, Պատմութիւն Հայոց, սկզբից մինչև մեր օրերը, Թիֆլիս, 1895, լ. 17:

¹² F. Feydit, Manuel de langue Arménienne, p. 153.

¹³ Ստ. Պալատանյան, Պատմութիւն Հայոց, լ. 20:

քին մեջ խրած, տապալեց թշնամին:

Այս կերպով սկիզբ ունեցավ այն ազգությունը, որ իր տոհմապետի անունով կոչվեցավ «Հայ»¹⁴:

Հայկ Նահապետին փոխարինում է Արամ Նահապետը: Ֆեղին ըստ Ստ. Պալասանյանի մեջբերում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այն հատվածը, որը վկայում է Արամի անսահման հայրենամասիրությունը. «որուն հաջորդեց Արամ Նահապետը, որ «հայրենանաեր մարդ ըլլալով, ավելի լավ կհամարեր իր հայրենիքին համար մեռնիլ, քան թե Հայաստանը տեսնել օտարներեն ոտնակոյն եղած և իր հայրենակիցները օտար լուծին տակ իմկած» (Պալասանյան)՝¹⁵:

Նույն հատվածը պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ ունի հետևյալ բովանդակությունը. «Սա այր աշխատասէր և հայրենամասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր, լաւ համարէր զմեռնելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զահման հայրենիս, և հարազատից արեան նորա տիրել արանց օտարածնաց»¹⁶: Ֆեղին պատկերում է, թե ինչպես է Արամը պատժում Հայաստանը ստրկացնել կամեցող նյութար Մարեսին, հալածում իր երկիրը նվաճել ցանկացող ասորի Բարշամին, ինչպես է ընդարձակում Հայաստանի սահմանները, անցնելով զամիրների երկիրը՝ հասնում մինչև Ալիս գետը. «Կավանդվի, որ Նինոս՝ Ասորեստանի թագավորը, ճանչավ Արամը իբրև Հայոց թագավոր»¹⁷:

Ֆ. Ֆեղիի «Հայոց լեզվի» դասագրքում կան Հայաստանում իշխած բոլոր թագավորական գերդաստանների համառոտ բնութագրերը: Առաջինը Հայկազյան թագավորներն էին. «Ամենքն ալ Հայկի սերունդեն էին, որով Հայկազյան կոչվեին»¹⁸: Նա նշում է, որ առաջին պատմադիր թագավորը եղել է Պարույրը: Հայկազյան թագավորների մեջ նշում է Տիգրան Երվանդիամին, որն իր քրոջը կնության ուղարկեց Աննաց Աժդահակին՝ Մարաց թագավորին: Այնուհետև նշում է, թե ինչ քաղաքական վիճակ էր տիրում Հայաստանում Ալեքսանդր Մակեդոնացու տիրապետության ժամանակ: Արտաշեայան թագավորության ժամանակ Արտաշեաը Երասմի ափերին կառուցում է Արտաշատ քաղաքը:

Հետաքրքիր ձևով է Աերկալացված «Տիգրան Մեծն արքայից արքա» բաժինը¹⁹: Ֆեղին շեշտում է, թե Տիգրան Մեծի ժամանակ Հայաստանն ունեցել է իր ամենամեծ տարածքային սահմանները՝ Կասպից մինչև Սիրիա: Ֆեղին առանձին Աերկալացնում է «Եղեսիոյ հայ թագաւորները, Արգար», որում հիշատակված են Հիսուս Քրիստոսի և Արգար արքայի նամակագրությունը, Թաղեռն առաջալի՝ Հայաստան զալը, Արգարի բուժվելը, այնուհետև Թաղեռն առաջալի և Սամատորկի քրոջ՝ Սանդովան կույսի նահատակությունը հանուն քրիստոնեական հավատի: Առանձին հատվածով է Աերկալացված Արշակունյաց թագավորության պատմությունը՝ Տրդատից մինչև Խոսրով:

¹⁴ F. Feydit, Manuel de langue Arménienne, p. 154.

¹⁵ Նոյն գլողում, լ. 210:

¹⁶ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, լ. 46-47:

¹⁷ F. Feydit, Manuel de langue Arménienne, p. 210.

¹⁸ Նոյն գլողում, լ. 227:

¹⁹ Նոյն գլողում, լ. 236-237:

Ազգայանգեղոսի «Հայոց պատմության» հաղորդած փաստերի հիման վրա է գրված «Մեծն Տրդաւ և Ս. Գրիգոր Լուսավորիչ» բաժինը: Պատմվում է Գրիգորի հրաժարումն Անահիտ դիցություն պատվելուց: «Իր հաղթանակի առթիվ Տրդաւ զոյն նվիրեց Անահիտ դիցություն և Գրիգորին պատվիրեց, որ ինքը ծաղկե պահպաներ տամի «Ուկեմոր», բայց Գրիգոր, որ քրիստոնյա էր, հաճան շառավ շատվածութի մը երկրպագել»: Ֆ. Ֆեղին, որ սովորույթուն ունի ֆրանսախոս ընթերցողին բացատրել հայոց լեզվի բոլոր այն բառերը, որոնք նա կարող է կարդալով շուրջներ դրանց իմաստը, «շատված բառը բացատրում է հետևյալ կերպ: «Չատված ne suis pas la même déclinaison que Աստված» (Չատված չունի առյօն հոլովումը, ինչ Աստված)»²⁰:

Սեղմ ձևով մերկայացված են Գրիգոր Լուսավորչի վարքն ու Հոհիփսիմյան կույսերի վկայարամությունը: «Թագավորը հրամայեց, որ բոլոր մերյանները խորտակվին և անոնց տեղ եկեղեցիներ շինվին: Գրիգոր Հայոց ընդհանուր հովիվ կարգվեցավ և Հայաստանի Լուսավորիչ կոչվեցավ: Այսպես է, որ քրիստոնեական կրոնքն ընդունող առաջին ազգը եղավ հայ ազգը»²¹: Նույն բաժնում մերկայացված են «Վարդանանք և Ղետնանք», Ավարայրի ճակատամարտը, Զաք Օրբելյան գործը շարունակած Վահան Մամիկոնյանը: «Պարսիկները Վահանի արիության վրա զմայլած՝ հաշտություն առաջարկեցին և խոտացան, որ հայերը ազատ պիտի ձգեն քրիստոնեությունը պաշտելու (484)»²²:

Բավական մանրամասն է մերկայացված «Բագրատունեաց թագաւորութիւն» բաժինը (885-1045 թթ.): Թվարկվում են Բագրատունի հայ թագավորները՝ իրենց երևելի գործերով: Գովեստով են պատկերված Աշոտ Երկաթը, Աշոտ Ողորմածը, Արա կիմը՝ Խոսրովանուց թագուհին, որը իր անձնական ծախքով կառուցեց Սամահին և Հաղպատ Աշանավոր վաճեցրու:

Ծեշտված է Ամին շքեղ և հարուստ մայրաքաղաք լիմելը: «Ամին մայրաքաղաքը զարդարեցին և այնքան եկեղեցիներ շինեցին, որ ուամիկ դասին մեջ սովորություն եղավ Ամին «հազարումենկ» եկեղեցիներուն վրա երդում ընել»²³:

Հայաստանի Կիլիկյան շրջանը հայագետն իրավամբ բաժանում է երկու ժամանակաշրաբածի՝ «Ռուբինյան իշխաններ» (1080-1198) և «Ռուբինյան թագավորներ» (1198-1342): Ֆ. Ֆեղին Հայաստանի պատմությունը հասցնում է մինչև մեր օրերը՝ շուրջուանալով պատմել սեղովկ թուրքերի, Լեռն Թեմուրի, Ալեքսանդր Մուհամեդի, Շահ Աբասի՝ Հայաստան կատարած ավերիչ արշավանքների մասին:

Ֆրեդերիկ Ֆեղին գրում է Զաք 1915 թվականի հայացինչ եղեռնի մասին: «Մյուս կողմնան, 1915-ի ջարդերով, թուրքերը բնաշինջ ըրին իրենց տիրապետության տակ գտնված հայկական զավառներուն հայ բնակչությունը»²⁴:

Ամենաջերմ տողերով է բնութագրված դասագրքի մեջ «Հայկական դասական մատենագրութիւն» բաժինը: Այս հատվածում վերստին փառարանվում են հայ մատենագրութե-

²⁰ Նոյյն փնդում, լ. 273:

²¹ Նոյյն փնդում, լ. 274:

²² Նոյյն փնդում, լ. 286:

²³ Նոյյն փնդում, լ. 296:

²⁴ Նոյյն փնդում, լ. 327:

յոնը սկզբնավորող երկու մեծ հոգևոր-գրական գործիչները՝ Ս. Սահակը և Ս. Մեսրոպը. «Ս. Սահակ Կաթողիկոսին փափաքով Ս. Մեսրոպ հայկական տառերը հնարեց, և այս երկու պատկառելի կրոնավորները, իրենց աշակերտներուն գործակցությամբ, հետամուտ եղան Աստվածաշունչը թարգմանելուն»²⁵.

Ֆ. Ֆեյդին համճարեղ փիլիսոփաներ է համարում Եզնիկ Կողբացուն և Դավիթ Ագհարդին՝ այնուինուն ավելացնելով. «Թեև հայուն համճարը ընդունակ է լուրջ իմաստափության և խոր աստվածաբանության, սակայն հայերը բանաստեղծ են բնությամբ և շուտ մը սկսած են հորիմել քերթողական շունչով լի շարականներ, որոնք Ուկեղարեն ի վեր և մինչև հիմա եկեղեցիներուն մեջ կերպվին»²⁶. Նա զմայլելի է համարում Գր. Նարեկացու, Ն. Ծնորհալու, Ն. Լամբրոնացու ստեղծագործությունները:

Ֆրանսիացի հայագետը սքանչացած է նաև Նահապետ Քոչչակի հայրեններով, ինչպես և Մխիթար Սեբաստացու գործունեությամբ, Հ. Չամչյանի «Հայոց պատմությամբ», Շուրբ բանաստեղծ Մ. Պետրիկաչյանի բանաստեղծություններով: Նրան հոգում են Խ. Աբովյանի «Վերք Հայաստան» Վեպը, Ռաֆֆու հայրենահրական վեպերը, որոնցում առկա է Վիտոր Հյուգոյին հիշեցնող գորեղ շունչ: Նա նշում է, որ իր ապրած օրերին, այսինքն՝ 20-րդ դարի երկրորդ կեսին, «գրական բոլոր սեռերը արտակարգ փայլով կմշակվին Հայաստանի մեջ»:

Ֆրեդերիկ Ֆեյդին իր «Հայոց լեզվի դասագրքում» դրված բնագրերով այն միտքն է ընդգծում, որ հինգերորդ դարում Մեսրոպ Մաշտոցի համճարով արարված Հայոց Այրութենը եղել է իսկական հրաշք, որն ապահովել է հայ ժողովրդի հետագա մտավոր կյանքի չընդհատվող վերելքը²⁷:

²⁵ Նոյն գիրում, լ.ց 336:

²⁶ Նոյն գիրում:

²⁷ 1963-ին Նյու Յորքում հրապարակված Ա. Ա. Պափիկյանի «The Golden age in the fifth century» («Ուկեղար հինգերորդ դարում») գրքում Մաշտոցի այրութենի կրնան զար հնեց ընտրված լ. որպես հրաշք, և այդ խորագրով կա ատանձին գլուխ. «A miracle» գիրն (The golden age in the fifth century, by A. A. Bedikian, New York, 1963, p. 13-22).